ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-19/2-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 08.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Կ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 14.02.2020թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-20-19/2-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **15 996 000 (տասնհինգ միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժինը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011024537 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետ	«Էյչ Գրուպ» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ., 13/30 «Արմսվիսբանկ» ՓԲԸ, Հ/Հ 2500010488760100 ՀՎՀՀ 01254973 Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-20-19/2-3 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ եռամսյակների 2020թ.
						2-րդ եռամսյակ
1	Աշխատանքային կայան /"Ֆոտոմոդ" և "Պանորամա" ռազմական նշանակության երկրատեղեկատվական համալիր/	հատ	2	7998000	15996000	2

Հավելված N 2
№ ԳՀԱՊՁԲ-20-19/2-3 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Աշխատանքային կայան /"Ֆոտոմոդ" և "Պանորամա" ռազմական նշանակության երկրատեղեկատվական համալիր/	30211250/503	15996000	15996000	15996000	15996000	15996000	15996000	15996000	15996000	15996000

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էյչ Գրուպ» ՍՊԸ տնօրեն

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ